



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ք. Սիսիան, Միսական 31
Հեռախոս (0283) 2-33-30 ֆաքս (0283) 2-33-30
էլ. հասցե <http://www.sisian.am/>
էլ. փոստ sisiancity@mail.ru, sisisn.syuniq@mta.gov.am

Թիվ 2107
23 դեկտեմբերի 2020թ.


ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարտիրոսյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի նիստի թիվ 93-Ա, 94-Ն, 95-Ա, 96-Ն, 97-Ա, 98-Ա, 99-Ա, 100-Ա, 101-Ն և 102-Ա որոշումները՝ կից հավելվածներով:
Առդիր՝ 83 թերթ:

Կ. Միրաբեան Կ. ՄԻՐԱԲԵԱՆ

Կապ. Հ. Բլրոյան
0283233330, 077987133



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ք. ՍԻՍԻԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 դեկտեմբերի 2020 թվականի թիվ 93-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն համարվող գույքի (հողամասերի, շենքերի և շինությունների) օտարման 2021 թվականի ծրագիրը հաստատելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 97-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 91-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ շարադրելու մասին» թիվ 842-Ա որոշումը հաստատելու մասին:

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 14-ի թիվ 37-Ա որոշման անվավեր ճանաչելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 18(Ն) որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Աղիտու բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ Վ.



ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.


ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.



ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.



ԱՏԵՓԱՆՅԱՆ Բ.



Համայնքի ղեկավար

/ Ա. Սարգսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 դեկտեմբերի 2020 թվականի թիվ 94-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի տեսակները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում տեղական տուրքերի գոտիավորումները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2021 թվականի տեղական վճարների տեսակները՝ համաձայն հավելված 4-ի:
5. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2021 թվականի տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 5-ի:
6. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9


Դեմ -0

Ձեռնպահ -0


ԱՅՎԱԶՅԱՆ Վ.


ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.


ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա. 

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է. 

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա. 

ՊՈՂՈՍՅԱՆ Վ. 

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ. 

Համայնքի ղեկավար



Մ. Սարգսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝

- 1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.
- 2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.
- 3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.
- 4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար
- 5) միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար.
- 6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
- 7) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար.
- 8) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար.
- 9) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար
- 10) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար
- 11) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.
- 12) քաղաքային բնակավայրում ավագանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային կենդանիներ պահելու թույլտվության համար
- 13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների
- 14) համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու համար, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու համար.
- 15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.
- 16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար.
- 17) համայնքի վարչական տարածքում հասարակական կազմակերպման և շահագործման թույլտվության համար.
- 18) համայնքի վարչական տարածքում հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար.

Համայնքապետ
/ աշխատակազմի ղեկավար  Վ. Միրաբյան




Ց Ա Ն Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում սահմանվում է հետևյալ գոտիավորումները՝

- 1) 1-ին գոտին ընդգրկում է Սիսիան քաղաքը.
- 2) 2-րդ գոտին ընդգրկում է Բռնակոթ, Անգեղակոթ, Դարբաս, Շամբ, Շաքի և Շաղատ բնակավայրերը.
- 3) 3-րդ գոտին ընդգրկում է Ախլաթյան, Աշոտավան, Ույծ, Վաղատին, Նորավան, Տոլորս, Աղիտու, Շենաթաղ, Որոտնավան, Սալվարդ, Լոր, Թասիկ, Դաստակերտ, Իշխանասար և Հացավան բնակավայրերը.
- 4) 4-րդ գոտին ընդգրկում է Թանահատ, Արևիս, Բալաք, Բնունիս, Գետաթաղ, Մուցք, Նժդեհ, Տորունիք և Լծեն բնակավայրերը:

Համայնքապետարան
աշխատակազմի ղեկավար



[Handwritten Signature] Վ.Միրաբյան

ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ

1	2 ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՏԵՍԱԿԸ	Տեղական տուրքի դրույքաչափը ըստ գոտիավորման, ՀՀ դրամ			
		3 1-ին գոտի	4 2-րդ գոտի	5 3-րդ գոտի	6 4-րդ գոտի
1)	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախնաճժին համալստեսխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար:				
ա)	հիմնական շենքերի և շինությունների համար՝				
	մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար:	տասնհինգ հազար	տասնհինգ հազար	տասնհինգ հազար	տասնհինգ հազար
բ)	սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝				
-	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար:	երեսուն հազար	երեսուն հազար	երեսուն հազար	երեսուն հազար
-	500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար:	հիսուն հազար	հիսուն հազար	հիսուն հազար	հիսուն հազար
-	1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար	հիսուն հազար	հիսուն հազար	հիսուն հազար	հիսուն հազար
-	3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար:	մեկ հարյուր հազար	մեկ հարյուր հազար	մեկ հարյուր հազար	մեկ հարյուր հազար
գ)	ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝				
-	մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	երեք հազար	երեք հազար	երեք հազար	երեք հազար
-	20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	հինգ հազար	հինգ հազար	հինգ հազար	հինգ հազար

2.	<p>համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարելավումն աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի), թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝</p>				
ա.	<p>չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝</p>	երեք հազար	երեք հազար	երեք հազար	երեք հազար
բ.	<p>բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1)-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.</p>				
գ.	<p>նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1)-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը</p>				
3)	<p>համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝</p>	հինգ հազար	հինգ հազար	հինգ հազար	հինգ հազար
4)	<p>համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝</p>	երեք հարյուր հազար	երկու հարյուր հազար	երկու հարյուր հազար	երկու հարյուր հազար
5)	<p>միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեգրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝</p>	երեք հարյուր հազար	երեք հարյուր հազար	երեք հարյուր հազար	երեք հարյուր հազար

6)	համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	վաթսուն հազար	վաթսուն հազար	վաթսուն հազար	վաթսուն հազար
7)	համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վալյում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	հիսուն հազար	հիսուն հազար	հիսուն հազար	հիսուն հազար
8)	համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝				
ա)	ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝				
-	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	տասը հազար	երկու հազար հինգ հարյուր	երկու հազար	մեկ հազար հինգ հարյուր
-	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	տասներեք հազար	տաս հազար հինգ հարյուր	տաս հազար հինգ հարյուր	տաս հազար հինգ հարյուր
-	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	տասնհինգ հազար	տասներեք հազար հինգ հարյուր	տասներեք հազար հինգ հարյուր	տասներեք հազար հինգ հարյուր
-	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	քսաներեք հազար	քսան հազար հինգ հարյուր	քսան հազար հինգ հարյուր	քսան հազար հինգ հարյուր
-	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	երեսունհինգ հազար	քսանհինգ հազար հինգ հարյուր	քսանհինգ հազար հինգ հարյուր	քսանհինգ հազար հինգ հարյուր
-	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	հիսունհինգ հազար	քառասունհինգ հազար հինգ հարյուր	քառասունհինգ հազար հինգ հարյուր	քառասունհինգ հազար հինգ հարյուր
բ)	ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝				
-	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	տասը հազար	երկու հազար հինգ հարյուր	երկու հազար	մեկ հազար հինգ հարյուր
-	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	տասներեք հազար	տասը հազար հինգ հարյուր	տասը հազար հինգ հարյուր	տասը հազար հինգ հարյուր
-	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	տասնհինգ հազար	տասներեք հազար հինգ հարյուր	տասներեք հազար հինգ հարյուր	տասներեք հազար հինգ հարյուր
-	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	քսաներեք հազար	քսան հազար հինգ հարյուր	քսան հազար հինգ հարյուր	քսան հազար հինգ հարյուր

-	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	երեսունհինգ հազար	քսանհինգ հազար հինգ հարյուր	քսանհինգ հազար հինգ հարյուր	քսանհինգ հազար հինգ հարյուր
-	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում	հիսունհինգ հազար	քառասունհինգ հազար հինգ հարյուր	քառասունհինգ հազար հինգ հարյուր	քառասունհինգ հազար հինգ հարյուր
9)	իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար, մեկ քառակուսի մետրի համար.	երեք հարյուր հիսուն	երեք հարյուր հիսուն	երեք հարյուր հիսուն	երեք հարյուր հիսուն
10)	համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.				
ա.	առևտրի օբյեկտների համար	քսանհինգ հազար	քսանհինգ հազար	քսանհինգ հազար	քսանհինգ հազար
բ.	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար	հիսուն հազար	հիսուն հազար	հիսուն հազար	հիսուն հազար
գ.	բաղնիքների (սաունաների) համար	երկու հարյուր հազար	երկու հարյուր հազար	երկու հարյուր հազար	երկու հարյուր հազար
դ.	խաղատների համար	հինգ հարյուր հազար	հինգ հարյուր հազար	հինգ հարյուր հազար	հինգ հարյուր հազար
ե.	շահումով խաղերի համար	երկու հարյուր հիսուն հազար	երկու հարյուր հիսուն հազար	երկու հարյուր հիսուն հազար	երկու հարյուր հիսուն հազար
զ.	վիճակախաղերի համար	մեկ հարյուր հազար	մեկ հարյուր հազար	մեկ հարյուր հազար	մեկ հարյուր հազար
1)	համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և կրթական թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝				
ա.	հիմնական շինությունների ներսում՝				
-	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	հինգ հազար	հինգ հազար	հինգ հազար	հինգ հազար
-	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	վեց հազար	վեց հազար	վեց հազար	վեց հազար
-	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	տասնմեկ հազար	տասնմեկ հազար	տասնմեկ հազար	տասնմեկ հազար
-	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	տասնյոթ հազար	տասնյոթ հազար	տասնյոթ հազար	տասնյոթ հազար
-	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	քսանհինգ հազար	քսանհինգ հազար	քսանհինգ հազար	քսանհինգ հազար
-	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	երեսունհինգ հազար	երեսունհինգ հազար	երեսունհինգ հազար	երեսունհինգ հազար
բ.	ոչ հիմնական շինությունների ներսում՝				
-	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	մեկ հազար	մեկ հազար	մեկ հազար	մեկ հազար

-	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	մեկ հազար հինգ հարյուր	մեկ հազար հինգ հարյուր	մեկ հազար հինգ հարյուր	մեկ հազար հինգ հարյուր
-	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	երկու հազար հինգ հարյուր	երկու հազար հինգ հարյուր	երկու հազար հինգ հարյուր	երկու հազար հինգ հարյուր
-	100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	հինգ հազար	հինգ հազար	հինգ հազար	հինգ հազար
-	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	տասը հազար	տասը հազար	տասը հազար	տասը հազար
-	500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար	քսան հազար	քսան հազար	քսան հազար	քսան հազար
12)	քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար. օրացուցային տարվա համար	հինգ հազար	զրո	զրո	զրո
13)	ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար				
ա.	ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	երեք հազար	երեք հազար	երեք հազար	երեք հազար
բ.	թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար	հինգ հազար երկու հարյուր հիսուն	հինգ հազար երկու հարյուր հիսուն	հինգ հազար երկու հարյուր հիսուն	հինգ հազար երկու հարյուր հիսուն
գ.	սոցիալական գովազդի համար	զրո	զրո	զրո	զրո
դ.	այլ արտաքին գովազդի համար	մեկ հազար հինգ հարյուր	մեկ հազար հինգ հարյուր	մեկ հազար հինգ հարյուր	մեկ հազար հինգ հարյուր
ե.	դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%	երեք հարյուր յոթանասունհինգ	երեք հարյուր յոթանասունհինգ	երեք հարյուր յոթանասունհինգ	երեք հարյուր յոթանասունհինգ
զ.	եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով	մեկ հարյուր հիսուն	մեկ հարյուր հիսուն	մեկ հարյուր հիսուն	մեկ հարյուր հիսուն
14)	Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օբյեկտով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար	մեկ հարյուր հազար	մեկ հարյուր հազար	մեկ հարյուր հազար	մեկ հարյուր հազար
15)	համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների)՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար	տասը հազար	տասը հազար	տասը հազար	տասը հազար

16)	համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար	հինգ հարյուր հազար	հինգ հարյուր հազար	հինգ հարյուր հազար	հինգ հարյուր հազար
17)	համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար				
ա.	3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	երկու միլիոն հինգ հարյուր հազար	երկու միլիոն հինգ հարյուր հազար	երկու միլիոն հինգ հարյուր հազար	երկու միլիոն հինգ հարյուր հազար
բ.	5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	հինգ միլիոն	հինգ միլիոն	հինգ միլիոն	հինգ միլիոն
գ.	7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար	յոթ միլիոն	յոթ միլիոն	յոթ միլիոն	յոթ միլիոն
դ.	10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար	տասը միլիոն	տասը միլիոն	տասը միլիոն	տասը միլիոն
18)	համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար	հիսուն հազար			

Համայնքապետարան / աշխատակազմի քարտուղար



Վ.Միրաբյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները՝

- 1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
- 2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարելավումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
- 3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
- 4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
- 5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
- 6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
- 7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար.
- 8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար.
- 9) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար.
- 10) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար.
- 11) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար.
- 12) համայնքային գույքի օգտագործման համար փոխհատուցման վճար.
- 13) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար.
- 14) կարուսելների (զվարճահարմարանքների) շահագործման վճարովի ծառայությունների մատուցման վճար:

Համայնքապետության
/ աշխատակազմի ճարտարագետ /



F. Shikharjan
Վ.Միրաբյան

**ԴՐՈՒՅՔԱԶՈՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ քսան հազար ՀՀ դրամ.
2. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ քսան հազար ՀՀ դրամ.
3. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ քսան հազար ՀՀ դրամ.
4. համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հիսուն երկու հազար ՀՀ դրամ.
5. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար ՀՀ դրամ.
6. համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ զրո ՀՀ դրամ.
7. բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական՝
 - Սիսիան քաղաքում՝ ամսական երկու հարյուր ՀՀ դրամ,
 - գյուղական բնակավայրերում՝ ամսական մեկ հարյուր ՀՀ դրամ,
8. ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով՝
 - ա/ առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն ՀՀ դրամ,
 - բ/ հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեսուն ՀՀ դրամ,
 - գ/ վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան ՀՀ դրամ,
 - դ/ գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի

համար՝ հինգ Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ութ ՀՀ դրամ,

ե/արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ դրամ,

զ/շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն մասի ա/-ե/ կետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի ա/-ե/ կետերով սահմանված դրույքաչափով:

է/շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի ա/-ե/ կետերով սահմանված դրույքաչափով:

8.1. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար հիսուն ՀՀ դրամ:

8.2. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

9. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 8-րդ մասի ա/-ե/ կետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

ա/ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար.

բ/ ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին կամ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:



9.1. Սույն հավելվածի 8-րդ մասով սահմանված շենքերի, շինությունների և տարածքների մասով աղբի հեռացման հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող և ստացող կողմերի միջև կնքված պայմանագրով:

10. համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ հինգ հարյուր ՀՀ դրամ:

11. Սիսիանի համայնքի բազմաբնակարան շենքերի միասնական ամբողջական սպասարկման բնակարանների ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր քմ տարածքի վճարի չափ սահմանվում է ամսական բնակելի տարածքի և միասնական ամբողջական սպասարկման ոչ բնակելի ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր քմ տարածքի համար վեց դրամ:

12. Միսիան քաղաքի վարչական տարածքում տեղակայված անշարժ գույքի համարակալման և հասցեավորման համար վճարի չափ սահմանվում է հինգ հազար դրամ, իսկ բնակավայրերի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:
13. Համայնքային ենթակայության Միսիան քաղաքի նախադպրոցական հաստատություններ հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2021 թվականի համար սահմանվում է չորս հազար հինգ հարյուր դրամ, իսկ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Միսիանի համայնքի Բռնակոթ, Աղիտու, Դարբաս, Շամբ, Ոյծ, Աշոտավան, Շաղատ, Նորավան, Անգեղակոթ, Շաքի, Տոլորս, Վաղատին և Որոտնավան բնակավայրերի նախադպրոցական հաստատություններ հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2021 թվականի համար սահմանվում է չորս հազար դրամ:
 - 1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Միսիանի համայնքի Հացավան, Բնունիս, Տորունիք, Լոր և Թասիկ բնակավայրերում «Այլընտրանքային նախադպրոցական ծառայություն Սյունիքի մարզի փոքր համայնքներում» ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի գրասենյակին կից «Քայլ առ քայլ» ԲՀ-ի կողմից ստեղծված խմբեր հաճախող երեխաների ամսական վարձավճարը 2021 թվականի համար սահմանվում է անվճար:
14. Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատություններ հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2021 թվականի համար սահմանվում է՝
 - 1) Միսիան քաղաքի «Զ. Ա. Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում՝ չորս հազար դրամ.
 - 2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Միսիանի համայնքի «Էմմա Ասյանի անվան Միսիանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ում՝
 - ա. դաշնամուրի դասարան՝ չորս հազար դրամ.
 - բ. վոկալի, ջութակի, քանոնի և կլարնետի դասարաններ՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,
 - գ. շեփորի և դուդուկի դասարաններ՝ երեք հազար դրամ:
 - 3) «Միսիանի համայնքի շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ում՝
 - ա. նախապատրաստական խումբ՝ երկու հազար դրամ.
 - բ. ուսումնական խումբ՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
 - գ. ուսումնամարզական խումբ՝ երեք հազար դրամ:
 - 4) Միսիան քաղաքի «Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ում՝
 - ա. մարզասրահի մարզասարքերից օգտվելու վճարը 1 ժամվա համար՝ չորս հարյուր դրամ, միանվագ վճարելու դեպքում ամսական չորս հազար դրամ.
 - բ. առողջարարական խումբ՝ ամսական չորս հազար դրամ.
 - գ. խոհարար-հրուշակագործ, խոհարար-դիզայներ խմբեր՝ չորս հազար դրամ.
 - դ. գեղանկարչության խումբ՝ երեք հազար հինգ հարյուր դրամ.
 - ե. ժամանակակից պարի խումբ՝ չորս հազար դրամ.
 - զ. վարսահարդարների, մատնահարդարների, դիմահարդարների խմբեր՝ վեց հազար դրամ.
 - է. հելլոնագործություն, ուլունքագործություն, դեկորացիաների ձևավորում, կար ու ձևի խմբեր՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
 - ը. ասմունքի և համակարգչային խմբեր՝ երկու հազար դրամ.
 - թ. պարի դասարան՝ չորս հազար դրամ:
 - 5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Միսիանի քաղաքային համայնքի «Միսիանի ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ-ում՝ հինգ հազար դրամ:
15. «Համո Սահյանի անվան Միսիանի քաղաքային մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի դահլիճի վարձակալական վճարի չափ սահմանվում է մանկական միջոցառումների համար քսանհինգ հազար դրամ, բարեգործական միջոցառումների համար զրո դրամ, այլ միջոցառումների համար հիսուն հազար դրամ, թատերական խումբ՝ երեք հազար դրամ:
16. Միսիան քաղաքի «Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ի դահլիճի վարձակալման վճարի չափը մեկ միջոցառման անցկացման համար սահմանվում է քսան հազար դրամ:

17. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի «Էմմա Ասյանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի դահլիճի վարձակալման վճարի չափը մեկ միջոցառման անցկացման համար սահմանվում է քսան հազար դրամ:
18. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ-ի արհեստական խոտածածկով խաղադաշտի վարձակալման վճարի չափը մանկապատանեկան մրցաշարերի մեկ խաղ անցկացնելու համար սահմանվում է քսան հազար դրամ, առաջին լիգայի մեկ խաղ անցկացնելու համար սահմանվում է հարյուր հազար դրամ, բարձրագույն խմբի լիգայի մեկ խաղ անցկացնելու համար սահմանվում է երեք հարյուր հազար դրամ:
19. Համայնքային սեփականություն հանդիսացող մսի վաճառակետում բնակավայրերի բնակիչների կողմից մսի վաճառք իրականացնելու նպատակով ծախսի փոխհատուցման վճար մեկ կետից մեկ օրվա համար՝ մեկ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ:
20. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ մեկ հազար ՀՀ դրամ փոխհատուցման վճար:
21. Կարոտելների (զվարճահարմարանքների) շահագործման վճարովի ծառայությունների մատուցման վճար 1 անձի համար ըստ խաղասարքերի՝
 - ա. օվկիանոսային զբոսանք – Ocean Ramble՝ երկու հարյուր դրամ,
 - բ. ինքնակառավարվող ինքնաթիռներ – Self-Control Plane՝ երկու հարյուր դրամ,
 - գ. արծաթափայլ վիշապ – Dragon Coaster՝ երեք հարյուր դրամ,
 - դ. փոքրիկ հեքիաթային անիվներ – Mini Ferry Wheels՝ երկու հարյուր դրամ:
22. Սահմանվում է նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների համար արտոնություններ և զեղչեր.
 - 1) զոհված զինծառայողների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար՝ անվճար.
 - 2) հաշմանդամություն ունեցող երեխաների համար՝ անվճար.
 - 3) մեկ ընտանիքից չորս և ավելի երեխաներ համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններ հաճախելու դեպքում մեկ երեխայի համար՝ անվճար (ծնողի համաձայնությամբ).
 - 4) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար սահմանված վարձավճարի 50%-ի չափով.
 - 5) վիրավոր զինծառայողների երեխաների համար սահմանված վարձավճարի 50%-ի չափով:


 Համայնքապետության
 / աշխատակազմի ներստորագրող

 Վ.Միրաբյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 դեկտեմբերի 2020 թվականի թիվ 95-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ, ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՕՏԱՐՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի զարգացման ծրագրի բաղկացուցիչ մաս կազմող համայնքի սեփականություն համարվող գույքի /հողամասերի, շենքերի և շինությունների/ օտարման 2021 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

Համայնքի ղեկավար

Ա. Սարգսյան



ԾՐԱԳԻՐ

«Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն համարվող գույքի
(հողամասերի, շենքերի և շինությունների) օտարման»

h/h	Օտարվող գույքի հասցեն	Օտարվող գույքի մակերեսը, քմ	Օտարման նպատակը	Օտարման ժամկետները	Հողամասի գործառնական նշանակությունը և կատեգորիան
1	Սիսիանի համայնքի Շաքի բնակավայր 22-րդ փողոց թիվ 52	2400	հասարակական սպասարկման կետ	I կիսամյակ	բնակավայրերի հասարակական կառուցապատման
2	Սիսիանի համայնքի Շաղատ բնակավայր 14- րդ փողոց թիվ 14	1390	անասնագոմ կառուցելու	I կիսամյակ	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների
3	Սիսիանի համայնքի Թասիկ բնակավայր 10-րդ փողոց թիվ 2	1200	բնակելի տուն	I կիսամյակ	բնակավայրերի բնակելի կառուցապատման
4	Իսրայելյան փողոց 99	600	բնակելի տուն	I կիսամյակ	բնակավայրերի բնակելի կառուցապատման
5	Իսրայելյան փողոց 101	1200	բնակելի տուն	I կիսամյակ	բնակավայրերի բնակելի կառուցապատման
6	Գայի փողոց 7/1-8	20	ավտոտնակ կառուցելու	I կիսամյակ	բնակավայրերի բնակելի կառուցապատման
7	Գայի փողոց 7/1-9	20	ավտոտնակ կառուցելու	I կիսամյակ	բնակավայրերի բնակելի կառուցապատման
8	Գայի փողոց 3/1-3	20	ավտոտնակ կառուցելու	I կիսամյակ	բնակավայրերի բնակելի կառուցապատման
9	Գայի փողոց 3/1-11	20	ավտոտնակ կառուցելու	I կիսամյակ	բնակավայրերի բնակելի կառուցապատման
10	Շահումյան փողոց 98/1-2	108	սպասարկման կետ կառուցելու համար	I կիսամյակ	բնակավայրերի հասարակական կառուցապատման
11	Գայի փողոց 7/1-10	20	ավտոտնակ կառուցելու	II կիսամյակ	բնակավայրերի բնակելի կառուցապատման

12	Երիտասարդական փողոց 59/1	596.0	բնակելի տուն կառուցելու	II կիսամյակ	բնակավայրերի բնակելի կառուցապատման
4700	1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող 4710 + տող 4720 + տող 4730 + տող 4740 + տող 4750 + տող 4760 + տող 4770), այդ թվում՝	x	32732.9	304359.3	x
4710	ՆՎԻԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՄԱՐԱՎԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող 4711 + տող 4712), որից՝	x	14458.0	14458.0	x
4712	- Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	14458.0	14458.0	x
5000	Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող 5100 + տող 5200 + տող 5300 + տող 5400), այդ թվում՝	x	1186760.6	x	1186760.6
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5110 + տող 5120 + տող 5130), այդ թվում՝	x	1186760.6	x	1186760.6
5110	ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 5111 + տող 5112 + տող 5113), որից՝	x	1147674.4	x	1147674.4
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	259783.1	x	259783.1
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	887891.3	x	887891.3

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԱԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՌԿՆՈՒՄ ԱՄՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԻ ՄԻՄԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ / Ա.ՍԱՐԳՍՅԱՆ



ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 97-Ա ՈՐՈՇՄԱՆ
7-ԴՂ ԿԵՏԻ 6-ԴՂ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ

(հազար դրամով)

Տողի NN	Բա ժին	Խու մբ	Դա ւ	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	Տնտեսագիտական	Ընդամենը (ս.8+ս.9)	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100)		2155601.5	1276258.2	1150969.7
2100	1	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2120 + տող 2130 + տող 2140 + տող 2150 + տող 2160 + տող 2170 + տող 2180) այդ թվում՝		400051.6	324368.9	75682.7
2110	1	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ և արհեստագործություններ		383297.2	309754.5	73542.7
2111	1	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում		383297.2	309754.5	73542.7
				- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	28646.0	28646.0	0.0
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	69152.7	0.0	69152.7
2600	6	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 3610 + տող 3620 + տող 3630 + տող 3640 + տող 3650 + տող 3660), այդ թվում՝		228758.5	49174.3	179584.2
2640	6	4	0	Փողոցների լուսավորում, որից՝		205432.1	34597.5	170834.6
2641	6	4	1	Փողոցների լուսավորում		205432.1	34597.5	170834.6
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	170834.6	0.0	170834.6
2900	9	0	0	ԿԲՈՒԹՅՈՒՆ (տող 2910 + տող 2920 + տող 2930 + տող 2940 + տող 2950 + տող 2960 + տող 2970 + տող 2980), այդ թվում՝		562860.0	371628.4	191231.6
2910	9	1	0	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից՝		428717.1	237485.5	191231.6
2911	9	1	1	Նախադպրոցական կրթություն		428717.1	237485.5	191231.6
				- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	237485.5	237485.5	0.0
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	160775.4	0.0	160775.4
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 3010 + տող 3020 + տող 3030 + տող 3040 + տող 3050 + տող 3060 + տող 3070 + տող 3080 + տող 3090), այդ թվում՝		19000.0	19000.0	0.0
3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), որից՝		19000.0	19000.0	0.0
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		19000.0	19000.0	0.0
				- Նվիրատվություններ այլ շահապետություններին կազմակերպություններին	4819	13000.0	13000.0	0.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՆԱԳՅԱՆ Ա.ՍԱՐԳՍՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

18 դեկտեմբերի 2020 թվականի թիվ 98-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 91-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 29-ի «Համայնքային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 91-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և որոշման 2-րդ, 6-րդ և 8-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն 1-3 հավելվածների:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.


ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.



Համայնքի ղեկավար



Մ. Ա. Սարգսյան

Հավելված 1

ՀՀ Սյունիքի մարզի Միսիանի համայնքի
ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-
ի թիվ 98-Ա որոշման

Հ Ա Ս Տ Ի Ք Ա Ց ՈՒ Ց Ա Կ
«ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ

(12 խումբ)

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Աշխատակի ցների թվաքանակ	Հաստիքայ ին միավոր	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձն՝ ըս տ դրույքաչափի
1	2	3	4	5	6
1	Տնօրեն	1	1	180,000	180,000
2	Գլխավոր հաշվապահ	1	1	115,000	115,000
3	Գործավար	1	1	91,275	91,275
Միսիան քաղաք, 5 խումբ					
4	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	1	115,000	115,000
5	Դաստիարակ	4	2.5	93,312	233,280
6	Դաստիարակ	6	3.75	96,275	361,031
7	Լոգոպեդ	1	0.75	93,312	69,984
8	Խոհարար	1	1	88,312	88,312
9	Խոհարարի օգնական	1	1	91,275	91,275
10	Դաստիարակի օգնական	3	3	94,275	282,825
11	Դաստիարակի օգնական	2	2	91,312	182,624
12	Երաժիշտ	1	1.25	96,275	120,344
13	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	1	93,312	93,312
14	Լվացարար	1	1	91,275	91,275
15	Տնտեսավար	1	1	88,312	88,312
16	Բուժքույր	1	1	91,275	91,275
17	Դռնապահ	1	1	91,275	91,275
18	Դերձակ	1	0.25	88,312	22,078
19	Օժանդակ բանվոր	1	1	88,312	88,312
20	Պահակ	1	1	88,312	88,312
Ընդամենը Միսիան		31	26.5		2,585,101
Նորավան բնակավայր, 1 խումբ					
21	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	115,000	57,500
22	Դաստիարակ	2	1.12	96,275	107,828
23	Խոհարար	1	0.75	91,275	68,456
24	Դաստիարակի օգնական	1	1	94,275	94,275
25	Բուժքույր	1	0.5	91,275	45,638
26	Հավաքարար	1	0.5	91,275	45,638
27	Լվացարար	1	0.5	91,275	45,638
Ընդամենը Նորավան		8	4.87		464,972
Շամբ բնակավայր, 1 խումբ					
28	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	115,000	57,500
29	Դաստիարակ	2	1.12	96,275	107,828
30	Խոհարար	1	0.5	88,312	44,156
31	Դաստիարակի օգնական	1	1	94,275	94,275
32	Բուժքույր	1	0.5	91,275	45,638
33	Հավաքարար	1	0.5	91,275	45,638
Ընդամենը Շամբ		7	4.12		395,034

	Աղիտու բնակավայր, 1 խումբ				
34	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	115,000	57,500
35	Դաստիարակ	2	1.12	96,275	107,828
36	Խոհարար	1	0.5	91,275	45,638
37	Դաստիարակի օգնական	1	1	94,275	94,275
38	Բուժքույր	1	0.5	91,275	45,638
Ընդամենը Աղիտու		6	3.62		350,878
	Դարբաս բնակավայր, 1 խումբ				
39	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	115,000	57,500
40	Դաստիարակ	2	1.12	96,275	107,828
41	Խոհարար	1	0.75	91,275	68,456
42	Դաստիարակի օգնական	1	1	94,275	94,275
43	Բուժքույր	1	0.5	91,275	45,638
44	Լվացարար	1	0.5	91,275	45,638
Ընդամենը Դարբաս		7	4.37		419,334
	Լոր բնակավայր, 1 խումբ				
45	Դաստիարակ	1	0.5	96,275	48,138
Ընդամենը Լոր		1	0.5		48,138
	Վաղատին բնակավայր, 1 խումբ				
46	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	115,000	57,500
47	Դաստիարակ	2	1.12	96,275	107,828
48	Խոհարար	1	0.75	91,275	68,456
49	Դաստիարակի օգնական	1	1	94,275	94,275
50	Բուժքույր	1	0.5	91,275	45,638
Ընդամենը Վաղատին		6	3.87		373,697
	Որոտնավան բնակավայր, 1 խումբ				
51	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	115,000	57,500
52	Դաստիարակ	2	1.12	96,275	107,828
53	Խոհարար	1	0.5	91,275	45,638
54	Դաստիարակի օգնական	1	1	94,275	94,275
55	Բուժքույր	1	0.5	91,275	45,638
Ընդամենը Որոտնավան		6	3.62		350,878
ԸՆԴԱՄԵՆԸ		72	51.47	-	4,988,031

/ Աշխատակազմի ղեկավար



[Handwritten signature]

Վ.Միրաբյան

Հավելված 2

«Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի
ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ
98-Ա որոշման

Հ Ա Ս Տ Ի Ք Ա Ց ՈՒ Ց Ա Կ

«Է. Ասյանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորի քանակը	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի
1	2	3	4	5
1	Տնօրեն	1	142,540	142,540
2	Ուսմասվար	1	88,312	88,312
3	Հաշվապահ	1	98,312	98,312
4	Կլանների դասատու	0.35	88,312	30,909
5	Կլանների դասատու	1.4	91,275	127,785
6	Զուլթակի դասատու	1	91,275	91,275
7	Զուլթակի դասատու	0.5	91,275	45,638
8	Դաշնամուրի դասատու	1.875	91,275	171,141
9	Դաշնամուրի դասատու	11.275	88,312	995,718
10	Վոկալի դասատու	1.35	88,312	119,221
11	Վոկալի դասատու	4.4	91,275	401,610
12	Վոկալի դասատու	1	91,275	91,275
13	Թեորիայի դասատու	2.375	88,312	209,741
14	Թեորիայի դասատու	0.525	91,275	47,919
15	Երգչախմբի ղեկավար	1.4	91,275	127,785
16	Քանոնի դասատու	2.175	88,312	192,079
17	Քանոնի դասատու	1.4	91,275	127,785
18	Դաշնամուր լարող	0.5	88,312	44,156
19	Գործավար	1	88,312	88,312
20	Գրադարանավար	1	91,275	91,275
21	Տնտեսվար	1	91,275	91,275
22	Հավաքարար	2	91,275	182,550
23	Պահակ	2	88,312	176,624
ԸՆԴԱՄԵՆԸ		41.525		3,783,236

Աշխատակազմի քարտուղար



(Handwritten signature)

Վ.Միրաբյան

Հավելված 3

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի
ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի
թիվ 98-Ա որոշման

Հ Ա Ս Տ Ի Ք Ա Ց ՈՒ Ց Ա Կ

«Զ. Ա. Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորի քանակը	Պաշտոնային դրույքաչափի	Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի
1	2	3	4	5
1	Տնօրեն	1	145,976	145,976
2	Ուսումն. դաս. աշխ. գծով տեղակալ	1	98,312	98,312
3	Հաշվապահ	1	101,275	101,275
4	Գծանկար, գեղանկար	0.7	88,312	61,818
5	Մանկավարժ, գեղանկարչություն	1.2	91,275	109,530
6	Մանկավարժ, ասեղնագործություն	0.9	88,312	79,481
7	Մանկավարժ, գորգագործություն	0.9	88,312	79,481
8	Մանկավարժ, գեղանկ., գծանկ., ստեղծ.	1.2	91,275	109,530
9	Մանկավարժ, գեղանկ., ստեղծագ.	1.15	91,275	104,966
10	Մանկավարժ, գծանկարչություն	0.5	91,275	45,638
11	Մանկավարժ, գեղանկ., խեցեգործ., ստեղծ.	0.7	91,275	63,893
12	Դիզ. օպերատոր	1	91,275	91,275
13	Համակարգչային օպերատոր	1	91,275	91,275
14	Մանկական մեթոդիստ	1	91,275	91,275
15	Տնտեսվար	1	88,312	88,312
16	Հավաքարար	1	88,312	88,312
17	Պահակ	2	88,312	176,624
ԸՆԴԱՄԵՆԸ		17.25		1,626,972

/ Աշխատակազմի նախագահ



(Handwritten signature)

Վ.Միրաբյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

18 դեկտեմբերի 2020 թվականի թիվ 99-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵՎԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի «ՍԻՍԻԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 842-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությամբ և 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ շարադրելու մասին» թիվ 842-Ա որոշումը:
2. Հաստատել «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9


Դեմ -0

Ձեռնպահ -0


ԱՅՎԱԶՅԱՆ Վ.


ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.


ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.


ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա. 

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է. 

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա. 

ՊՈՂՈՍՅԱՆ Վ. 

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ. 

Համայնքի ղեկավար  Ա. Սարգսյան



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

**«ՍԻՍԻԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ Սյունիքի մարզ
Ք. Սիսիան 2020թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետև՝ Կազմակերպություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որն ստեղծվել է «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկը «գրանցման համարը՝ 88.180.00926» վերակազմավորման ձևով վերակազմակերպվելու արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:
2. Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման պետական գրանցման պահից և դադարում է լուծարման ավարտի /լուծարման պետական գրանցման/ պահից:
3. Կազմակերպությունն ունի իր հայերեն անվանումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:
4. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով /այսուհետև՝ օրենսգրք/, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով /այսուհետև՝ օրենք/, Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:
5. Կազմակերպության հիմնադիրն է հանդիսանում Սիսիանի համայնքը:
6. Կազմակերպության կառավարումն իրականացվում է Սիսիանի համայնքի ղեկավարի կողմից:
7. Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:
8. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:
9. Հայաստանի Հանրապետությունը և համայնքը պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների համար: Կազմակերպությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքի պարտավորությունների համար:
10. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, կրճատ՝ «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ:
11. Կազմակերպության գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Սիսական 41:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

12. «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը՝
 - ա/ կազմակերպում է համայնքի բնակարանային կոմունալ տնտեսության աշխատանքները, այդ թվում՝ Սիսիանի համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրների լուծման նպատակով մատուցվող ծառայությունների իրականացումը,
 - բ/ կազմակերպում է կանաչապատման, աղբահանության և սանիտարական մաքրման, բարեկարգման աշխատանքների իրականացումը, արոնենտային վճարների գանձման աշխատանքները,

- գ/ իրականացնում է արտաքին լուսավորության համակարգի ընթացիկ նորոգումը, պահպանումը և շահագործումը,
- դ/ իրականացնում է ներհամայնքային ճանապարհների սպասարկման աշխատանքները,
- ե/ իրականացնում է համայնքային սեփականություն համարվող ջրամատակարարման, ջրահեռացման և ոռոգման համակարգերի ընթացիկ նորոգումը, պահպանումը և շահագործումը,
- զ/ իրականացնում է անձրևաջրատար ցանցերի ընթացիկ նորոգումը, պահպանումը և շահագործումը,
- է/ ապահովում է համայնքի սեփականություն համարվող շենքերի, բնակելի և ոչ բնակելի տարածքների պահպանումը և շահագործումը, կազմակերպում դրանց նորոգման աշխատանքները,
- ը/ կազմակերպում է համայնքի ղեկավարի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պարտադիր պահպանումը, շինության սեփականատերերից գանձում է պարտադիր պահպանման համար սահմանված պարտադիր նորմերի վճարները,
- թ/ օրենքով սահմանված կարգով շենքի ընդհանուր բաժնային սեփականության կամ շինության սեփականատերերի վերաբերյալ տալիս է վիճակագրական հաշվետվություններ,
- ժ/ շենքում մահացած անձանց ժառանգների շահերի պաշտպանության նպատակով դիմում է նոտարին՝ ժառանգական գույքի պահպանման համար,
- ժա/ շինության սեփականատերերին, շենքում բնակվող կամ գործունեություն իրականացնող անձանց կամ շահագրգիռ այլ անձանց տալիս է տեղեկանքներ,
- ժբ/ կազմակերպում է գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները,
- ժգ/ կազմակերպում է համայնքի բնակիչների հաշվառումը,
- ժդ/ պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպությունների կամ անհատների,
- ժե/ դիմում է դատարան՝ շինության սեփականատերերի կողմից չվճարված վճարների բռնագանձման համար:

Կազմակերպությունը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության այլ տեսակներ:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ՝ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Պետական գրանցման պահից կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:
14. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտականությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
15. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և /կամ/ օտարերկրյա բանկերում՝ հաշվարկային հաշիվներ /ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ՝ տարադրամով/:
16. Կազմակերպությունը կարող է լինել այլ կազմակերպության հիմնադիր /մասնակից/ միայն հիմնադրի որոշմամբ:

17. Կազմակերպությունն իրավունք ունի ստեղծել /հիմնադրի որոշմամբ/ անանձնացված ստորաբաժանումներ /մասնաճյուղեր, ներկայացուցչություններ/, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքներում: Օտարերկրյա պետությունում առանձնացված ստորաբաժանումների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենքներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկներն իրավաբանական անձինք չեն և գործում են կազմակերպության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Կազմակերպության լիազորագրերի հիման վրա:

18. Կազմակերպությունն իրավունք ունի.

ա/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել և տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,

բ/ հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրության համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, մեկ տարուց ոչ ավելի ժամկետով՝ իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնել վարձակալության,

գ/ օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

19. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

20. Կազմակերպությունը պարտավոր է.

ա/ օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում ու ներկայացնել վիճակակագրական հաշվետվություն,

բ/ աշխատանքային պայմանագրեր կնքել Կազմակերպության աշխատակիցների հետ,

գ/ պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,

դ/ օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Կազմակերպության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները, հրապարակել տարեկան ֆինանսական հաշվետվությունը,

ե/ ապահովել Կազմակերպության փաստաթղթերի /Կազմակերպության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Կազմակերպության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենների հրամանների, հրահանգների ու կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի/ պահպանումը:

զ/ կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

21. Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

22. Կազմակերպության հիմնադիրն իրավունք ունի՝

- ա/ հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը /այդ թվում՝ գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները/,
- բ/ կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել Կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
- գ/ վերահսկողություն իրականացնել Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ,
- դ/ հայցով դիմել դատարան՝ օրենքի կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքն անվավեր ճանաչելու նպատակով, օգտվել օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

23. Կազմակերպության հիմնադիրը պարտավոր է՝

- ա/ ապահովել Կազմակերպության բնականոն գործունեությունը,
- բ/ չհրապարակել Կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ,
- գ/ կատարել Կազմակերպության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,
- դ/ պահպանել սույն կանոնադրության դրույթները:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ

24. Կազմակերպության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

Կազմակերպության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարեցնելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը կազմակերպության սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն դրամով:

25. Կազմակերպության հիմնադիրը Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ:

26. Կազմակերպության հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

27. Կազմակերպության գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

28. Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

29. Կազմակերպության կառավարման մարմիններն են Կազմակերպության հիմնադիրը և տնօրենը:

30. Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը Կազմակերպության հիմնադիրն է, որն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը և որն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Կազմակերպության հիմնադիրը ապահովում է Կազմակերպության բնականոն

գործունեությունը և պատասխանատվություն է կրում սույն կանոնադրությամբ սահմանված գործունեության չկատարման կամ անպատշաճ կատարման համար:

31. Կազմակերպության հիմնադրի իրավասությանն են պատկանում՝
- ա/ Կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
 - բ/ Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմի հաստատումը,
 - գ/ Կազմակերպությանն ամրացվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կազմի հաստատումը,
 - դ/ Կազմակերպության վերակազմակերպումը,
 - ե/ Կազմակերպության լուծարումը,
 - զ/ Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,
 - է/ Կազմակերպությունների հիմնադրումը,
 - ը/ Կազմակերպություններում մասնակցության մասին որոշումների ընդունումը,
 - թ/ Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը, տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաամկետ դադարեցումը,
 - ժ/ Կազմակերպության գործունեության վերահսկողության իրականացումը,
 - ժա/ Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ Կազմակերպության կողմից իրականացվող գործունեության տեսակների և ծրագրերի սահմանումը,
 - ժբ/ Կազմակերպության աուդիտ իրականացնող անձի հաստատումը,
 - ժգ/ աուդիտի իրականացման մասին որոշում ընդունելը,
 - ժդ/ Կազմակերպության տարեկան ծախսերի, այդ թվում՝ արտաբյուջետային եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատումը,
 - ժե/ Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը,
 - ժզ/ Կազմակերպության շահույթի և վնասների օգտագործման կարգի մասին որոշման ընդունումը,
 - ժէ/ Կազմակերպության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքներ կատարելուն համաձայնություն տալը,
 - ժը/ Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, կանոնադրությունների հաստատումը,
 - ժթ/ Կազմակերպության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի հաստատումը,
 - ի/ Կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

Կազմակերպության հիմնադիրն իրավունք ունի որոշումներ ընդունել նաև օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ցանկացած այլ հարցի շուրջ:

32. Կազմակերպության ընթացիկ, արտադրատնտեսական, ֆինանսական և այլ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է հիմնադիրը: Տնօրեն կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող, Հայաստանի Հանրապետության գործունակ ցանկացած քաղաքացի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Կազմակերպության տնօրենի միջև աշխատանքային պայմանագիրը հիմնադրի անունից ստորագրվում է համայնքի ղեկավարի կողմից: Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, փոխհարաբերությունները հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման հիմքերը այդ թվում՝ «օրենքով սահմանված բոլոր հիմքերը», այլ դրույթներ, որոնք կողմերը կգտնեն անհրաժեշտ:

Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի կազմակերպության հիմնադրի իրավասությանը վերաբերող հարցերի: Տնօրենը օրենքով, հիմնադրի որոշումներով, աշխատանքային պայմանագրով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության, աշխատանքային պայմանագրի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը Հիմնադրին, պետությանը պատճառված վնասի համար, ընդ որում՝ տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

Հիմնադրի անունից հանդես եկող պաշտոնատար անձը /Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ղեկավարը/ պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել վերը նշված վնասի փոխհատուցման հարցը, հակառակ դեպքում՝ նա կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

Տնօրենի բացակայության դեպքում՝ հիմնադրի գրավոր որոշման համաձայն՝ տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

33. Կազմակերպության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Կազմակերպության:

34. Կազմակերպության տնօրենը իր իրավասության սահմաններում՝

ա/ առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը պետության, նրա մարմինների, այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում,

բ/ տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ/ կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

դ/ կազմակերպում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանք՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը,

ե/ տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով,

զ/ բանկում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ.

է/ սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

ը/ հաստատում է Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին, տալիս է համապատասխան լիազորագրեր,

թ/ արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, և վերահսկում դրանց կատարումը,

ժ/ կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

ժա/ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին,

ժբ/ աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ժգ/ իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ հիմնադրի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարականներ:

35. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադրի կողմից լիազորված անձը, օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար հիմնադիրն իրավունք ունի ամեն տարի ներգրավել Կազմակերպության, նրա տնօրենի, գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչ աուդիտորի /արտաքին աուդիտ/:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

36. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Կազմակերպությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

37. Կազմակերպությունը՝ նրա հիմնադրի որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

Եթե լուծարվող Կազմակերպության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվող միայն սնանկության հետևանքով:

38. Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքային բյուջե:

39. Կազմակերպությունը համարվում է լուծարված իսկ նրա գործունեությունը՝ դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

18 դեկտեմբերի 2020 թվականի թիվ 100-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 37-Ա ՈՐՈՇՈՒՄՆ
ԱՆՎԱԿԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ու 38-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, — դեմ, — ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից շահագործական հետախուզում կատարելու համար «Մոլիբդենի աշխարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սահմանափակ օգտվելու իրավունք /սերվիտուտ/ տրամադրելու մասին» թիվ 37-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

Համայնքի ղեկավար



Ա. Սարգսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 դեկտեմբերի 2020 թվականի թիվ 101-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 18(Ն) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով ու «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

- Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի վարչական տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 18(Ն) որոշման մեջ կատարել փոփոխություններ և որոշման 3-րդ հավելվածի կարգի վերջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.
«Գյուղական բնակավայրերից՝
ա. երկուշաբթի օրը՝ Տոլորս բնակավայրից,
բ. երեքշաբթի օրը՝ Հացավան, Բնունիս բնակավայրերից,
գ. չորեքշաբթի օրը՝ Շաքի բնակավայրից,
դ. ուրբաթ օրը՝ Աշոտավան, Բոնակոթ, Իշխանասար բնակավայրերից,
ե. շաբաթ օրը՝ Նորավան, Վաղատին, Ույծ բնակավայրերից»:
- Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՐՂՈՍՅԱՆ Վ.

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

Handwritten signature

Handwritten signature

Handwritten signature

Համայնքի ղեկավար



Handwritten signature Ա. Սարգսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

18 դեկտեմբերի 2020 թվականի թիվ 102-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՂԻՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշումն ու Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 2020 թվականի օգոստոսի 17-ի N110 եզրակացությունը և նկատի ունենալով «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Արմեն Բադալյանի 2018 թվականի հոկտեմբերի 31-ի դիմումն ու համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 9 կողմ, - դեմ, - ձեռնպահ

Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Աղիտու բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն և իրավաբանական անձին սեփականության իրավունքով պատկանող 2.25հա (վկ. 18102018-09-0017, կադ. ծածկ. 09-011-0107-0009) գյուղատնտեսական նշանակության վարելահողից 2.1841հա փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների հողեր գործառնական նշանակության:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

Handwritten signature

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

Handwritten signature

ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

Handwritten signature

ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

Համայնքի ղեկավար *Handwritten signature* Ա. Սարգսյան






ՍՅՆՍԱ

22. Սյունիքի մարզի համայնք Միսիպի գյուղ Արիտու <Ա.Ա.Բ. ԴՐՐՈՒՆՆԻՍ>> կոլ-ին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերից վարելահող/կարելահող/կրթությունամբարձրության և այլ արտադրական և այլ արտադրական օբյեկտների հողերի կառուցողի փոխարկով 2.1841 հա հողամասի գործառնական նշանակությունը/ արդյունաբերությունը/

Ս1:5000


Ս.Ա.Սարգսյան

20



2.1841 հա

Գլխի կոմ. համար	Կտորվածամասեր	Վր.մ.
1	X	Y
8593273.3834	4379798.3001	157.82
8593350.9268	4379935.5223	69.79
8593420.3751	4379928.6517	93.83
8593467.8579	4379847.7173	151.30
8593386.1202	4379720.3930	32.66
8593353.5511	4379722.7635	71.43
8593383.4412	4379787.6428	110.57
8593273.3834	4379798.3001	



Կատարող	Ստորագրություն	Վարչան Շեքարյան
Որակավորման վկայականի համար	Որակավորման	Կենտրոն
Իրավաբանական անուն	Սերժանտ	27 02 2012
	8811080950	Սերժանտ, արտադրող
		ՀՀ Կ. Ղևոնցի
		Կենտրոն